Վիրահայոց թեմի երիտասարդական բաժնի պատվիրակությունը մասնակցեց ՀԲԸՄ ընդհանուր ժողովին

Ընթացիկ տարվա ապրիլի 1-3-ը, Երևանում կայացավ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության 88-րդ ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին 150-ից ավելի պատվիրակներ աշխարհի տարբեր երկրներից: Ժողովում Վրաստանը ներկայացնում էր Վիրահայոց թեմի երիտասարդական բաժնի պատվիրակությունը՝ տնօրեն Վալերի Բաղալյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում ընդգրկված էին երիտասարդական բաժնի աշխատանքների համակարգող Նինա Սերոպովան, Վրաստանի երիտասարդ դիվանագետների ակումբի ղեկավար Գիորգի Թումասյանը, թարգմանչուհի Մարինա Սարգսյանը, բաժնի ակտիվիստներ Ռնիկ Կարապետյանը և Սերգեյ Նաջարովը:

ՀԲԸՄ ընդհանուր ժողովին իրենց ներկայությունն էին բերել Գերաշնորհ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ՀԲՄԸ նախագահ Բերձ Սեդրակյանը, TUMO կենտրոնի հիմնադիր Սեմ Սիմոնյանը, հայ մեծ բարերար Ռուբեն Վարդանյանը:

Թիվ 88 ընդհանուր ժողովի շրջանակներում պատվիրակությունների անդամները այցելեցին

1 / 3

UWC Dilijan-College դպրոց-պանսիոնատը, Հայաստանի Ամերիկյան համալսարանը, ստեղծագործական տեխնոլոգիաների TUMO կենտրոնը և այլուր:

Ժողովում կայացան տարբեր թեմաներով քննարկումներ, որոնցից էին «Մարդկային պոտենցիալը Հայաստանում և Սփյուռքում», «Հայոց Սփյուռք», «Հայոց պետականության կառուցման մարտահրավերները», «Հայության միջազգային դիրքերի ամրապնդում» և այլն: Քննարկումների ժամանակ իրենց կարծիքներն էին արտահայտում արվեստի, կրթության և բիզնեսի ներկայացուցիչները:

Ժողովի մասնակիցները ուշադրությամբ ունկնդրեցին Վիրահայոց թեմի պատվիրակության անդամների ելույթներն ու առաջադրած հարցերը, որոնք վերաբերում էին անցյալ դարաշրջանում Վրաստանում, մասնավորապես Թբիլիսիում հայ համայնքի դիրքերին, հայ մտավոր կյանքի զարգացման և ազգի առաջընթացի գործում Ներսիսյանի դպրոցի դերակատարությանը, Սփյուռքում հայ մարդու անհատականության և ազգային արժեքների պահպանությանը, ազգային դպրոցի զարգացմանը:

Պատվիրակության անդամները այցելեցին Ծիծեռնակաբերդ և ծաղիկներ խոնարհեցին Հայոց Ցեղասպանության նահատակների հիշատակին:



#AGBUtalks
Ոգեշնչել • Ներգրավել • Հզորացնել ազգը
Inspire • Engage • Strengthen the nation